ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասով, ինչպես նաև 67-րդ հոդվածի 1-ին մասով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. Օրենքնի նախագիծը
2. Օրենքի նախագծի ընդունման հիմնավորումը
3. Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Նախագծի հիմնական զեկուցողն է պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

Խնդրում եմ ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ ___ թերթ:

Հարգանքով՝
Վլադիմիր Վարդանյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները կայացվում են նիստերի (առկա կամ առցանց), ինչպես նաև առանց նիստ հրավիրելու՝ հարցման միջոցով՝ սույն օրենքով, Պալատի կանոնադրությամբ և Պալատի խորհրդի կողմից հաստատված խորհրդի աշխատակարգով սահմանված կարգով:

Առկա ձևով խորհրդի նիստն անցկացվում է նույն տարածքում խորհրդի անդամների անմիջական մասնակցությամբ (ներկայությամբ):

Առցանց ձևով խորհրդի նիստն անցկացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ խորհրդի անդամների անմիջական մասնակցությամբ:

Հարցման ձևով խորհրդի որոշումը կայացվում է խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամներից սահմանված կարգով ստացված քվեարկության տվյալներն ամփոփելու միջոցով:

Կարգապահական գործով հարցման ձևով խորհրդի որոշումը կայացվում է գործը գրավոր ընթացակարգով քննելու միջոցով:»:

***Հոդված 2.*** Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«8. Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը:

Փաստաբանների պալատի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող, իսկ հարցման ձևով որոշում կայացնելու դեպքում՝ քվեարկությանը

մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե փաստաբանների պալատի կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:»:

***Հոդված 3.*** Օրենքի 10-րդ հոդվածում շարադրել նոր՝ 9-րդ մաս՝

«9. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները ստորագրում է փաստաբանների պալատի խորհրդի նախագահը, բացառությամբ կարգապահական գործով խորհրդի որոշումների:»:

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածում շարադրել նոր՝ 10-րդ մաս.

«10. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է դատական կարգով վիճարկվել այդ որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»:

**Հոդված 2.** Օրենքի 39.6-րդ հոդվածի 4-րդ մասում «մասնակցող այլ անձանց:» բառերից հետո լրացնել «,բացառությամբ այն դեպքի երբ խորհուրդը որոշել է գործը քննել գրավոր ընթացակարգով:» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 39.7-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունում «խորհրդակցական սենյակում:» բառերից հետո լրացնել «բացառությամբ հարցմամբ (գրավոր ընթացակարգով) իրականացվող կարգապահական գործի քննության դեպքի:» բառերը:

***Հոդված 4.*** Օրենքի 39.7-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«7. Խորհրդի որոշումը կողմերին ուղարկվելուց հետո հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ դռնփակ նիստերով կայացված որոշումների, որոնց դեպքում հրապարակվում է միայն որոշման բնույթը և եզրափակիչ մասը:»:

***Հոդված 5.*** Օրենքի 39.7-րդ հոդվածի շարադրել 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«8. Կարգապահական գործը գրավոր ընթացակարգով քննելու ժամանակ Փաստաբանների պալատի խորհրդի կողմից կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոքի քննության գրավոր ընթացակարգը:

Պալատի խորհրդի որոշումը կողմերը կարող են բողոքարկել դատական կարգով՝ պալատի խորհրդի որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Այն դեպքում, երբ հնարավոր չի լինում Պալատի խորհրդի որոշումը հանձնել հասցեատիրոջը՝ հասցեն փոխելու կամ այլ պատճառով, ապա խորհրդի որոշման բողոքարկման ժամկետը հաշվարկվում է Պալատի խորհրդի որոշումը փաստաբանների պալատի ինտերնետային կայքում հրապարակվելու պահից: Կարգապահական գործի քննության արդյունքում փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու մասին Պալատի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում միայն սույն հոդվածով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, իսկ բողոքարկման դեպքում՝ խորհրդի որոշման օրինական ուժի մեջ մտնելը կասեցվում է (արտոնագիրը շարունակում է գործել) մինչև դատարանի եզրափակիչ ակտի ուժի մեջ մտնելը:»:

***Հոդված 6.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Փաստաբանության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) առաջարկվող փոփոխություններն ու լրացումները (այսուհետ՝ Նախագիծ) պայմանավորված են փաստաբանների իրավունքների պաշտպանության և ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) գործունեության արդյունավետությունը խթանող նոր կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով նաև արդի տեխնոլոգիական զարգացումները:

Պալատի՝ որպես փաստաբանների շահերը ներկայացնող անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպության գործադիր գործառույթներ իրականացնող հիմնական մարմինը՝ Պալատի խորհուրդը, իր իրավասությունն իրականացնում է հասարակական հիմունքներով: Այն փաստաբանները, ովքեր Պալատի խորհրդի անդամներ են, իրենց աշխատանքի համար չեն վարձատրվում և իրենց գործառույթներն իրականացնում են հիմնական աշխատանքին զուգահեռ: Փաստաբանների մասնագիտական գործունեության առանձնահատկություններից է այն, որ փաստաբանությունը հաճախ նորմավորված աշխատանք չէ, հետևաբար, Պալատի խորհրդի անդամ փաստաբանների համար կարող են առաջանալ գործնական դժվարություններ՝ Պալատի խորհրդի նիստերի կանոնավորապես մասնակցելու տեսանկյունից: Մինչդեռ, ներկայիս իրավակարգավորումներով Պալատի խորհրդի գործունեության իրավական ձևը նիստն է, այսինքն՝ Պալատի խորհրդի անդամների համատեղ հավաքը, որը պահանջում է վերջիններիս ֆիզիկական ներկայությունը:

Օրենքով Պալատի խորհրդին վերապահված են լրջագույն գործառույթներ, որոնք առնչվում են Պալատի և փաստաբանության բնականոն գործունեության ամենատարբեր ասպեկտներին: Մասնավորապես, փաստաբանների իրավունքների պաշտպանության առումով Պալատի խորհուրդն իրականացնում է կարևորագույն գործառույթ. քննում և վերջնական որոշում է կայացնում փաստաբանների կարգապահական պատասխանատվության գործերով՝ ներառյալ փաստաբանների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառումը:

Պալատի խորհրդի ընդարձակ լիազորությունները և միաժամանակ Պալատի խորհրդի անդամների աշխատանքի նշված առանձնահատկություններն անհրաժեշտություն են առաջացնում համալրել Պալատի խորհրդի գործունեության իրավական և տեխնիկական կառուցակարգերը՝ նպատակ ունենալով բարձրացնել Պալատի խորհրդի գործունեության արդյունավետությունը, դյուրացնել Պալատի խորհրդի անդամների՝ իրենց գործառույթներն իրացնելու կարգը և արդյունքում նպաստել Պալատի կողմից փաստաբանների իրավունքների պաշտպանության գործառույթի անխոչընդոտ իրականացմանը:

Նախագծով նախատեսվում է Պալատի խորհրդի նիստերն առցանց անցկացնելու հնարավորությունը, որը թույլ կտա Պալատի խորհրդի անդամներին, առանց համատեղ հավաքի, իրականացնել իրենց գործառույթները՝ կապի ժամանակակից միջոցներով կոմունիկացվելով միմյանց հետ և իրենց իրավասության ներքո գտնվող օրակարգային հարցերով կայացնելով որոշումներ: Սույն իրավատեխնիկական լուծումը թույլ կտա ապահովել Պալատի խորհրդի գործունեության անընդհատությունը և հնարավորին նվազեցնել քվորումի բացակայության հետևանքով Պալատի խորհրդի նիստերի հետաձգման դեպքերը: Ավելին, առաջարկվող կառուցակարգի ներդրմամբ՝ փաստաբանների կարգապահական գործերը քննության կառնվեն առավել սեղմ ժամկետներում՝ թույլ տալով փաստաբանին իր վարույթային իրավունքներն իրացնել առավել օպտիմալ ձևով:

Սույն համատեքստում Նախագծով առաջարկվում է ևս մեկ կառուցակարգի սահմանում, որը թույլ կտա նվազեցնել Պալատի խորհրդի աշխատանքային ծանրաբեռնվածությունը և միաժամանակ արագացնել փաստաբանների նկատմամբ կարգապահական այն վարույթների հանգուցալուծումը, որոնք համեմատաբար պարզ փաստակազմ ունեն և չեն ենթադրում ապացուցման բարդ գործընթաց և հետևաբար կարգապահական գործով կողմերի անմիջական մասնակցությունը: Խոսքը վերաբերում է Պալատի խորհրդի կողմից կարգապահական գործի քննության գրավոր ընթացակարգին: Վերջինս կբարձրացնի Պալատի խորհրդի՝ կարգապահական գործերի քննության արդյունավետությունն ու արագությունը համեմատաբար պարզ գործերով՝ խնայելով Պալատի խոհրդի, վարույթի մասնակիցների և Պալատի աշխատակազմի ռեսուրսները:

Նախագծով նախատեսվում է նաև Պալատի արդյունավետ գործունեությանն ուղղված ևս մեկ ընթացակարգային նորմ, որը վերաբերում է Պալատի կարգապահական որոշումների բողոքարկման ժամկետի հաշվարկման կարգին, որը կապված է նաև որոշումների ուժի մեջ մտնելու ժամկետի հետ: Գործող կարգը, երբ Պալատի նշված որոշումներն ուժի մեջ են մտնում հասցեատեր փաստաբանին հանձնվելու պահից՝ փոստով կամ առձեռն եղանակով, գործնականում առաջացնում է դժվարություններ, երբ փաստաբանը չի ծանուցում Պալատին իր հասցեի փոփոխության վերաբերյալ, կամ այլ պատճառներով հնարավոր չի լինում փոստով կամ առձեռն որոշումը հանձնել հասցեատիրոջը: Արդյունքում խնդիր է առաջանում Պալատի որոշումների բողոքարկման և նաև ուժի մեջ մտնելու ժամկետների հաշվարկման, այդ որոշումների կատարման և փաստաբանի՝ որպես կարգապահական վարույթի մասնակցի իրավունքների իրացման առումներով: Հետևաբար, Նախագծով առաջարկվում է այն դեպքերում, երբ հնարավոր չի լինում Պալատի որոշումը հանձնել հասցեատեր փաստաբանին, որոշման բողոքարկման ժամկետը հաշվարկել որոշումը Պալատի պաշտոնական ինտերնետային կայքում

հրապարակելու պահից: Իր էությամբ՝ նմանատիպ կառուցակարգ գործում է նաև դատավարական ընթացակարգերում և ապացուցել է իր արդյունավետությունը:

Նախագծով լրացվում է նաև օրենսդրական բացը կապված Խորհրդի այլ՝ ոչ կարգապահական գործերով կայացրած որոշումների բողոքարկման իրավունքի իրացման հետ: Մասնավորապես, Օրենքով սահմանված չէ նշված որոշումների բողոքարկման ժամկետը: Նախագծով առաջարկվում է սահմանել, որ նման որոշումները շահագրգիռ անձի կողմից կարող են դատական կարգով վիճարկվել այդ որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում:

Նախագծով նախատեսվել են նաև նշված կառուցակարգերի արդյունավետ իրացմանն ուղղված օժանդակ իրավակարգավորումներ:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

«Փաստաբանության մասին»
օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**Հոդված 10. Փաստաբանների պալատի խորհուրդը**

1. Փաստաբանների պալատի խորհուրդը փաստաբանների պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմինն է:

2. Փաստաբանների պալատի խորհրդի անդամների քանակը սահմանվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ, որը չի կարող պակաս լինել տասներկու անդամից՝ չհաշված խորհրդի նախագահին:

3. Փաստաբանների պալատի խորհրդի անդամները (բացառությամբ խորհրդի նախագահի) վարկանիշային կարգով ընտրվում են ընդհանուր ժողովի կողմից չորս տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

4. Փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած, սակայն չընտրված փաստաբանը՝ նախորդ անդամի սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար՝ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Փաստաբանների պալատի խորհուրդը՝

1) նշանակում է հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին.

2) մշակում և փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները.

3) մշակում և փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում փաստաբանի վարքագծի կանոնագիրքը.

4) կազմավորում է հաշվիչ հանձնաժողովը.

5) կազմավորում է որակավորման հանձնաժողովը.

6) իրավասու պետական մարմիններ առաջարկություններ է ներկայացնում օրենքների և իրավական այլ ակտերի փոփոխությունների, լրացումների, դրանց ընդունման վերաբերյալ, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք է տալիս նախագիծ մշակող մարմիններին.

7) հաստատում է փաստաբանների պալատի տարեկան բյուջեն՝ փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ.

8) կազմում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման փոխհատուցման ֆինանսական հայտերը.

9) որոշում է ընդունում փաստաբանի հավակնորդներին (այսուհետ՝ հավակնորդ) փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու վերաբերյալ՝ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված կարգով.

10) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին.

11) որոշում է ընդունում փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու կամ վերականգնելու մասին.

12) սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, ինչպես նաև փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը.

13) հաստատում է փաստաբանների պալատի աշխատակազմի հաստիքացուցակը.

14) լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը.

15) իրականացնում է սույն օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

6. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը հրավիրում է փաստաբանների պալատի նախագահը՝ ըստ անհրաժեշտության, սակայն տարեկան չորս անգամից ոչ պակաս: Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև պալատի խորհրդի անդամների մեկ երրորդի կամ փաստաբանների պալատի երեսուն անդամների նախաձեռնությամբ: Կարգապահական գործ քննելու նպատակով փաստաբանների պալատի խորհրդի նիստի գումարման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 39.6-րդ հոդվածով:

7. ~~Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է անդամների առնվազն կեսը: Փաստաբանների պալատի խորհրդի նիստն անցկացվում է խորհրդի անդամների ներկա լինելու միջոցով:~~
~~Փաստաբանների պալատի խորհրդի նիստերին փաստաբանների պալատի խորհրդի անդամը քվեարկում և իր այլ լիազորություններն իրականացնում է անձամբ:~~

Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները կայացվում են նիստերի (առկա կամ առցանց), ինչպես նաև առանց նիստ հրավիրելու՝ հարցման միջոցով՝ սույն օրենքով, Պալատի կանոնադրությամբ և Պալատի խորհրդի կողմից հաստատված խորհրդի աշխատակարգով սահմանված կարգով:

Առկա ձևով խորհրդի նիստն անցկացվում է նույն տարածքում խորհրդի անդամների անմիջական մասնակցությամբ (ներկայությամբ):

Առցանց ձևով խորհրդի նիստն անցկացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ խորհրդի անդամների անմիջական մասնակցությամբ:

Հարցման ձևով խորհրդի որոշումը կայացվում է խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամներից սահմանված կարգով ստացված քվեարկության տվյալներն ամփոփելու միջոցով:

Կարգապահական գործով հարցման ձևով խորհրդի որոշումը կայացվում է գործը գրավոր ընթացակարգով քննելու միջոցով:

8. ~~Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ձայների մեծամասնությամբ նախատեսված չէ փաստաբանների պալատի կանոնադրությունով:~~

8.Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը:

Փաստաբանների պալատի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող, իսկ հարցման ձևով որոշում կայացնելու դեպքում՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե փաստաբանների պալատի կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

9. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները ստորագրում է փաստաբանների պալատի խորհրդի նախագահը, բացառությամբ կարգապահական գործով խորհրդի որոշումների:

10. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է դատական կարգով վիճարկվել այդ որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

**Հոդված 39.6. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության կարգը**

1. Փաստաբանների պալատի խորհուրդը կարգապահական գործն ըստ էության քննող և վերջնական որոշում կայացնող մարմինն է:

2. Փաստաբանների պալատի խորհուրդ մուտք եղած կարգապահական գործը փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով վարույթ է ընդունում պալատի խորհրդի անդամը, որի մասին նա ընդունում է որոշում: Կարգապահական գործը վարույթ ընդունած խորհրդի անդամը այդ գործը փաստաբանների պալատի խորհրդում քննելիս հանդես է գալիս որպես նիստը նախագահող (սույն գլխում այսուհետ՝ նիստը նախագահող):

3. Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի խորհրդի կողմից կարգապահական գործի քննությանը չի մասնակցում:

4. Կարգապահական գործը վարույթ ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, նիստը նախագահողը պարտավոր է նշանակել փաստաբանների պալատի խորհրդի

նիստ և նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցել փաստաբանին, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, դիմող կողմին, վկաներին և կարգապահական գործին մասնակցող այլ անձանց բացառությամբ հարցմամբ (գրավոր ընթացակարգով) իրականացվող կարգապահական գործի քննության դեպքի:

5. Կարգապահական գործը քննող պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը:

6. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը պալատի խորհուրդը քննում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան գործը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

**Հոդված 39.7. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ պալատի խորհրդի որոշումը**

1. Մեկ կարգապահական վարույթի քննության շրջանակում, անգամ եթե նույն փաստաբանը կատարել է մի քանի կարգապահական խախտում, պալատի խորհուրդը կայացնում է մեկ որոշում:

2. Պալատի խորհուրդը որոշումը կայացնում է խորհրդակցական սենյակում, բացառությամբ հարցմամբ (գրավոր ընթացակարգով) իրականացվող կարգապահական գործի քննության դեպքի: Խորհրդակցական սենյակում կարող են ներկա լինել միայն տվյալ գործը քննող խորհրդի կազմում ընդգրկված անդամները: Այլ անձանց ներկայությունը չի թույլատրվում:

3. Խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է պալատի խորհրդի անդամների բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ավելի բարենպաստ է փաստաբանի համար:

4. Պալատի խորհրդի կողմից խորհրդակցական սենյակում քննարկված հարցերը, խորհրդի անդամների արտահայտած դիրքորոշումը և քվեարկության արդյունքները հրապարակման ենթակա չեն ինչպես նիստի ընթացքում, այնպես էլ գործով քննությունն ավարտվելուց հետո:

5. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո պալատի խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

1) փաստաբանին սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին.

2) կարգապահական վարույթը կարճելու մասին:

6. Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենքի և վարքագծի կանոնագրքի

դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ փաստաբանի:

~~7. Որոշումը կազմվում և կողմերին է ուղարկվում հրապարակումից հետո՝ քսան օրվա ընթացքում:~~

7)Խորհրդի որոշումը կողմերին ուղարկվելուց հետո հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ դռնփակ նիստերով կայացված որոշումների, որոնց դեպքում հրապարակվում է միայն որոշման բնույթը և եզրափակիչ մասը:

~~8. Պալատի խորհրդի որոշումը կողմերը կարող են բողոքարկել դատական կարգով՝ պալատի խորհրդի որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Պալատի խորհրդի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն հոդվածով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:~~

8)Կարգապահական գործը գրավոր ընթացակարգով քննելու ժամանակ Փաստաբանների պալատի խորհրդի կողմից կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոքի քննության գրավոր ընթացակարգը:

Պալատի խորհրդի որոշումը կողմերը կարող են բողոքարկել դատական կարգով՝ պալատի խորհրդի որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Այն դեպքում, երբ հնարավոր չի լինում Պալատի խորհրդի որոշումը հանձնել հասցեատիրոջը՝ հասցեն փոխելու կամ այլ պատճառով, ապա խորհրդի որոշման բողոքարկման ժամկետը հաշվարկվում է Պալատի խորհրդի որոշումը փաստաբանների պալատի ինտերնետային կայքում հրապարակվելու պահից: Կարգապահական գործի քննության արդյունքում փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու մասին Պալատի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում միայն սույն հոդվածով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո, իսկ բողոքարկման դեպքում՝ խորհրդի որոշման օրինական ուժի մեջ մտնելը կասեցվում է (արտոնագիրը շարունակում է գործել) մինչև դատարանի եզրափակիչ ակտի ուժի մեջ մտնելը:

9. Օրինական ուժի մեջ չմտած խորհրդի որոշման բողոքարկումը կասեցնում է դրա օրինական ուժի մեջ մտնելը:

10. Պալատի խորհրդի որոշումներն ի կատար են ածվում օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում և ծախսերի ավելացում չի նախատեսվում: